

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

## ԵՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ

(Մահուան հարիւրամեակի առիթսվ):

Որովհետեւ Կանտը գիտական-փիլիսոփայական գործունէութեամբ հանդերձ մեծ ծոռայութիւն է մատուցել առանձնապէս թէ իւր հայրենիքին՝ Գերմանիային և թէ ընդհանրապէս մարդկութեան՝ գործունէութեան մի այլ ասպարիզով, այն է ուսուցչութեամբ, ուստի աւելորդ չը լինի այստեղ մի քիչ աւելի կանգ առնել նորա գործունէութեան այդ կողմի վրայ:

Քառասուն տարուց աւելի Կանտը որպէս համալսարանի դասախոս՝ մեծ հաւատարմութեամբ ծառայեց իւր հայրենիքին: Սյոդ գործունէութեամբ նա մեծ աղքեցութիւն է ունեցել երկրի առաջնորդող լրջանների աշխարհայեցողութեան վրայ: Հին Պրուսիայի և անոր կից արեելեան գաւառների գրեթէ բոլոր աստիճանաւուր պաշտօնեաններն ու հոգեորականները, ուսուցիչներն ու բժիշկները նորա դպրոցումն էին անցնում: Գերմանիայի մի ծայրն ընկած փաքք համալսարանը նորա շնորհիւ գերմանական բարձրագոյն ուսումնական հիմնարկութիւնների շարքում առաջնակարգ դիրք գրաւեց:

Կանտի դասախոսութիւններն ընդգրկում էին իրենց մէջ ամբողջ փիլիսոփայութիւնը՝ այդ բառի հին իմաստով, որով հասկացւում էր տեսական բոլոր գիտութիւնների ամբողջութիւնը. այդ ամբողջութիւնից դուրս գտնուում էին միայն պատմաբանական գիտութիւնները. իսկ այդ մասին աւելի ճիշտ գաղափար կարող է տալ դասախոսուող առարկանների հետեւեալ ցուցակը. — տրամաբանութիւն, ընազանցադիտութիւն (մետաֆիզիկա), բարոյական փիլիսոփայութիւն, ընական իրաւունք, փիլիսոփայութեան հանրագիտութիւն, (ՅՀՈՒԿԼՈՊԵԴԻՅ) ընական աստուածաբանութիւն, մանկավարժութիւն, մարդաբանութիւն, Փիզիքական աշխարհագրութիւն, տեսական բնագիտութիւն, մաթեմատիկայ, մեջենայագիտութիւն, հանքաբանութիւն: Սյս բոլորից նա դասախոսութիւններ արել է, իսկ մըշտական դասախոսութեան առարկայ եղել են՝ տրամաբանութիւն

քնաղանցադիտութիւն և բնական աշխարհագրութիւն ու մշտական զբաղմունքի ներթ են մատակարարել մանկավարժութիւնն ու բարոյագիտութիւնը:

Դառնանք այժմ նրա դասախոսութիւնների նախ արտաքին—ապա և երրին եղանակներին: Արտաքինն երկու եղանակ ունի, այն է զուտ դասախոսութիւն և ապա դորձնական վարժութիւն, պաշտօնակարգ պրոֆեսոր լինելուց յետոյ, նա պարտադիր դասախոսութիւններին միշտ կցում էր և այդ դորձնական վարժութիւնները, որոնց մասին ճիշտ ոչինչ յայտնի չէ, սակայն ինչպէս երեսմ է, առքա մի տեսակ գիտական վիճարանութիւններ (discusses) են եղել: 1758 թ. իւր դասախոսութիւնների մասին արած յայտարարութիւններից մէկով նա հազորդում է, «որ նախընթաց օրերում շարադրուած դրութիւնը (Satz) վիճարանական եղանակով կզննէ» և այդ եղանակը նա համարում է ամենանպատակայարմարը հաստատուն սկզբունքներ ստանալու համար:

Ինչ դասաւանդութեան ներքին եղանակին է վերաբերում՝ այդ ոչ թէ սխոլաստիկ-գօգմատիկ բնաւորութիւնն է ունեցել, այլ սոկրատիան-քննադատական: Առաջին ուղղութեան ամենաէական կողմն այն է, որ նա ընդունուած, որոշ տեսակէառով նայուած ու հասկացուած, թէ գիտական և թէ փիլիսոփայական—բարոյական դրութիւններ նոյնութեամբ տալիս է ունկնդիրներին որպէս ալատրաստի, վերջակէտի հասած ճշմարտութիւններ և պարտագիր անում նոյնութեամբ էլ սովորելու նաև պարզ է, որ նոյն բանը չէ աշակերտին ուղղակի սովորեցնել, թէ երբ որ և է տարածութիւն ուղիղ գծերով շրջափակում է ամեն կողմից, այդ շրջափակող գծերի թիւը առնուազն երեք պիտի լինի, և նոյն բանը չէ, երբ աշակերտին ամեն կողմից շրջափակուած տարածութիւն են գծել տալիս և նա ինքն է այդ եղբակացութեան գալիս: Առաջին դէպքում նորա միտքը չգործեց, այլ ուրիշ մտքի դործունէութեան հետևանքը որպէս մի բեռառուակ իւր վրայ և հեշտութեամբ էլ կձգէ, կմոռանայ, իսկ երկրորդ գէպքում՝ ընդհակառակը՝ իւր իսկ ուղեղը ջանք է գործ դնում և հետեանքն այն է լինում, որ ուղեղի վրայ քանդակում, տպաւորում է անջինջ կերպով: Կանոք անա վերջնական հարուածը տուաւ սխոլաստիկ գօգմատիկ ուղղութեան իր ամբողջ ուսուցչական գործունէութեամբ: Նորա դասախոսութիւնների նպատակը չէ պատրաստի փրկիսոփայական վարդապետութիւն տալը, այլ ունկնդրին ինքնուրոյն մտածութեան դրդել, նորանոր մտքեր որոնել տալ և զարդացնել: Կանոք սկզբից և եթ տիրող դոգմատիկ ուղղութեան հակառակորդ լինելով՝ տառմ է.—«Փիլիսոփայութիւնն ընդհանրապէս չի կարելի սովորել այնպէս, ինչպէս սովորում ենք մաթեմատիկան,

ընտղիտութիւնը, պատմութիւնը, սակայն կարելի է սովորել փիլիսոփայութիւն անել: Փիլիտփայութիւն չի կարելի սովորել այն պատճառով, որ նա որպէս պատրաստի ճանաչուած գիտութիւն՝ դոյութիւն չունի. իւրաքանչիւր փիլիտփայ իւր համակարգութիւնը, վարդապետութիւնը հիմնում է նախորդի բեկորների վերայբայց գեռ չի ստեղծուել մի համակարգութիւն, որ իւր ամբողջ մասերով մնար: Փիլիտփայութիւնը չի կարելի սովորել, որովհետեւ նա չկայ, բայց եթէ լինէր էլ, չէր կարելի սովորել, որովհետեւ «սովորովի» (ՅԱԿԱԾ) փիլիտփայութիւնը կդադարէր այլ ևս փիլիտփայութիւն լինելուց և կդառնար մի պատմական՝ բայց ոչ երբէք փիլիտփայական գիտութիւն:

Սյս խօսքերի մէջ «Հուսաւորութեան դարու»\*) ողին է նկատւում: Սշակերտին անչափահաս զրութիւնից հանել և բարձրացնելով՝ սեփական հետազօտութիւնների վրայ հիմնուած ինքնուրոյն դատողութիւններ յօրինել տալը—համալսարանական դասաւանդման նվազաւակեւուն է: Խոկ աշակերտին ինչպէս ալէտք է սովորեցնել փիլիտփայութիւն անել, այդ հարցին Կանտը պատասխանում է, «վարժութիւնների և բանականութեան ինքնուրոյն գործունէութեան միջոցաւ Սյդ վարժութիւնների նիւթ են տալիս՝ մի կողմից բնական և պատմական իրողութիւնները (Zhatsachen) և միւս կողմից այդ երեւոյթների փիլիտփայօրէն բացատրելու ջանքերը. Կանտն իւր աշակերտներին երկու ճանապարհով է տանում ու նա ամենից առաջ աշխատում է նոցա այդպիսի փաստեր մատակարարել կամ նոցա այդ փաստերին մօտեցնելը. Սյդ է Փիլիքական աշխարհագրութեան և մարդաբանութեան գերը, որոնց նա ահագին նշանակութիւն է տալիս: «Նախկին փիլիտփայական դասաւանդութեան սխալն այն էր, ասում է նա 1765 թ. իւր դասախոսութիւնների մասին արած մի յայտարարութեան մէջ, որ նա երիտասարդութեան շատ վազ էր սովերեցնում իմաստակելու՝ նախ քան վերջնիս պատմական բաւականչափ գիտելիքներ՝ ձեռք բերելը, նախ քան վարժութիւններով նորամիտը զարգացնելը, ծանօթացնում էին նորան ընդհանուր գաղա-

\* «Հուսաւորութեան դար» (Zeitalter der Aufklärung) անուանուել է Ժ. դարը, շնորհիւ իւր առաջացրած մատու մեծ շարժման: Սյդ մատու շարժման մեջ սեր կապուած են մատանիացի նշանաւոր հեղինակ փիլիտփայ Ժան-Ժակ Ռուսոյի, զերմանեցիմերի բամասեղծ Լեսինգի և իւր՝ Կանտի առանձները: Կանտն աշխատել էր առանձնապես որոշել էր քեզ ինչ է Աշխակում իւր դարու այդ «Հուսաւորութիւն» մակարը և եկել այն եղակացութեան ու այդ նոյն էր ասել «իմ անուրոյն մածողութեան դար»:


փարների հետ, այստեղից էլ ծագում են՝ նախ դպրոցական այնովնի տեական նախապաշարումներ, որ շատ անգամ աւելի բիբա ու յամառ ին լինում՝ քան առօրեայ մոլորութիւնները, ապա կանխահաս մտածողների շաղակրատութիւնը, որ աւելի կոյք է լինում քան անձնագաստանութեան մի ուրիշ տեսակ և աւելի անբուժելի՝ քան տդիտութիւնն է» Այդ չարիքի հետ կոտելու համար նա բնագանցագիտութիւնից առաջ փորձնական հոգեբանութեան ու մարդաբանութեան դասախոսութիւններ է աւանդում. «Նմանապէս առաքինութեան մասին խօսելիս՝ նա նախ շարադրում է այն, ինչ որ լինում է և ապա այն՝ ինչ որ պէտք է լինի Վերջապէս նորա Փիզիքական աշխարհագրութեան դասախոսութիւններն առաջին թմասում ունկնդիրներին երկը ի ներկայ կազմութեան են ծանօթացնում, երկրորդ մասում—մարդուն՝ իւր բնական նախնական վիճակում, երրորդ մասում—պետութիւնների և ազգերի կազմակերպութեան և այսպիսով ունկնդիրն հաճելի և ուսանելի գիտելիքների պաշար են մատակարարում:

Կանտը իւր ունկնդիրներին ուրիշ ճանապարհով էլ էր առաջ տանում. այդ ճանապարհը փիլիսոփայութեան պատմութիւնն է, իւր դասախոսութիւնների ներածութեան մէջ նա սովորոնթիւն ունէր մի պատմական ակնարկ նուիրելու՝ ինչպէս առանձին առանձին հարցերի, նոյնպէս և իւր նախորդների վարդապետութեան մի պատմական ակնարկ էր ընծայում փիլիսոփայութեան, նաև հանրագիտութեան ու տրամարանութեան մէջ:

Հերցին գրած մի նարմակում Կանտն աւելի է շեշտում այն միտքը, թէ իր նպատակը չէ «արհեստաւոր փիլիսոփաներ» պատրաստել, «այլ հիմնական գրութիւնների վրայ հիմնուած համոզմունքներ տարածել ու ամրապնդել մարդկանց մէջ և այդպիսով զարգացող տաղանդներին միակ նպատակայարմար ուղղութիւնը տալ»: Կանտն այդ սկզբունքով առաջնորդուեցաւ ամբողջ յիշեալ 40 տարուայ ուսուցչական գործունէութեան ընթացքում, և այդ սկզբունքը շատ արդիւնաւոր հանդիսացաւ նորա հայրենիքի համար. իսկ որ Գերմանիան այն ժամանակներից սկսած փիլիսոփայութեան նոր հայրենիք դարձաւ, դորա պատճառների մէջ չպէտք է մոռանալ Կանտին իւր ուսուցչական գործունէութեամբ:

Գիտական գործունէութեան սկզբում Կանտի փիլիսոփայական հետաքրքրութիւնն ըստ ամենայնի դէպի արտաքին աշխարհն էր ուղղուած, ինչպէս կարելի է եղարկացնել այդ նորա հեղինակութիւններից և դասախոսութիւններից: Իւր դասախոսութիւնների մէջ բացի տրամարանութիւնից և բնագանցագիտութիւնից, որ նորածրագրի կարեոր մասն էին կազմում, մացրել էր մատեմատիկան ու

բնագիտութիւնը։ Շուշով դոցա հետ հաւասար նշանակութիւն առաջ  
ցու նաև ֆիզիքական աշխարհագրութիւնը, որ առաջին անգամ  
կանուք մտցրեց համալսարանական դասաւանդութեան մէջ։ Այս ա-  
ռարկան մեծ հետաքրքրութիւն առաջացրեց նոյն իսկ ուսանողական  
քջանից դուրս։ այս դասախոսութիւնների մէջ էր ամփոփում նա  
ամենահետաքրքրական և թանկագին տեղեկութիւնները բնութեան  
և մարդու մասին, այնպէս որ այդ տեղեկութիւնները, որպէս իւր  
տեսակի ուղերութիւններ դէպի աշխարհի բոլոր կողմերը, կարող  
են մի տեսակ նախաբան համարուել այն ժամանակ սովորական դար-  
ձած կրթական ճանապարհորդութիւնների, կամ մինչեւ անդամ փո-  
խարինել նոցաւ։



## ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԹՈՍԱԿԱՆ

### ՀԱՅՈՅ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՈՏՁԱԿՆԻ

«68 թ. ամրան կիսին Լուկրելոս, շարժուելով Տիգ-  
րանակերտից, առաջ գնաց անկասկած Բիթլիսի անցքով  
և դէպի արևմուտք Վանայ լճի ափերով՝ հասաւ Մուշի և  
Եփրատի սարահարթը։ Գնացքն ընթանում էր դանդաղ-  
թշնամու այրուձիու, մանաւանդ հեծեալ աղեղնաւորների  
անընդհատ ու անտանելի ընդհարումների պատճառով,  
բայց առանց աչքի ընկնող արդելքի նոքա գրաւեցին  
դիրքերն ու Եփրատի անցքը, որ քաջաբար պաշտպանում  
էր հայկական հեծելազօրը։ Երեաց և Հայոց հետեակա-  
զօրը, բայց չյաջողուեցաւ ճակատ յօրինել։ Այսպիսով  
բանակն հասաւ Հայաստանի բուն սարահարթին և առաջ  
էր քայլում դէպի անծանօթ երկիրը։ Նոքա դեռ մի կար-  
գին դժուարութեան չէին պատահել, բայց արդէն թշ-  
նամի այրուձիու հետ ընդհարման և երկը դժուարան-  
ցանելիութեան պատճառով յառաջիսաղացութեան ան-